71. ԱՉՔԸ ՎԱՀՐԸԿԱԼԱԾԵՆ, ԿԱՂԼԻԳՅԻՆ ՀՈՒ ՔՈՍԱԿԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Ելալ ա չիլալ մին աչքը վահրըկալած, մին կաղլիգյ, մին էլ մին քոսակ։ Էս իրեքանիս մին տեղ ղոնաղ ըն կանչալ, իրեքանն էլ քյինացալ ըն, մուն-մունու քշտե նստոտալ։

Էս աչքը վահրըկալածեն աչքը շատ վահրն ա կալալ, համանչալ ա թա սրփի. կաղլիղյն էլ վեր ծլրպատակ նստալ ա, վրեննը օղալ ա մեկնե, հրմանչալ ա, քոսակեն կլոխն էլ քոր ա եկալ, էլհա հրմանչալ ա, թա քորե։

Ախրը վեր ճարընեն կտրալ ա, աչքը վահրըկալածը մին ծեռքը մեկնալ ա, մինավն էլ աչքը սրփալ հու ասալ. «Իմ հորս մին թրվանգյ օնար, վեր թուշ ի օնում՝ հավին պոչրտակավն ար կենում»։

Կաղլեգյն էլ վրեննը մեկնալ ա հու ասալ. Բա իմ հարն էլ իմ պիծի վախտս մին չաքյմա ար առալ ինձհետե, կյեցե՝ նի չի մտավ, կյեցե՝ նի չի մտավ, ախրը վեր մին պենղ ծիքյ տրվե՝ նի մտավ»։

Էն քոսակն էլ կլոխը քորելավ ասալ ա. «Ա՛դա, հինչ շատ սոտ ըք ասում»։